ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվարի 18 **N 10-Ա**

ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և 1.14 կետի <<բ>> ենթակետի պահանջներով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները կազմակերպելու և վերահսկելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝
   1)ամենօրյա հսկողություն սահմանել մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների ընթացքին և պարբերաբար զեկուցել մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Մ.Աբգարյանի վրա:

ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2018թ հունվարի 18-ի N 10-Ա

կարգադրության

ԿԱԶՄ

ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մ.Աբգարյան --- ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Ա.Դավայան --- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Հ.Ղոնախչյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ

Ս.Հովսեփյան --- ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Ա.Ղազարյան --- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Դ.Մուրադյան --- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ **Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**